ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2025 թվականի N 922

«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-Ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար անվավոր տրակտորի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից էր ճանաչվել «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի՝ «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում սույն թվականի հուլիսի 17-ին «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ծանուցվել էր պայմանագրի նախագիծը, սակայն սահմանված ժամկետում ընտրված մասնակցի կողմից չի ներկայացվել իր կողմից հաստատված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից: Այսպիսով, «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/23» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի պայմանագիրը լուծարել և ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊ ՁԲ-25/23»	1	անվավոր տրակտորի	24.000.000	«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ	01075543	ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 31/34	28.07.2025	Հրազդանի Համայնքապետարան	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մաս	Առկա չէ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 օգոստոսի 2025թ.
ք.Հրազդան